

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ռուբեն Սևակը կենդանության օրոք հասցրեց ընդամենը մեկ ժողովածու հրատարակել. Կարմիր գիրքը, 1910, Կ. Պոլիս, 71 էջ: Մինչև այդ գրքի լույս տեսնելը, նա արդեն ընդունված անուն էր գրական-շրջանակներում: «Մասիս», «Լույս», «Արեւիլյան մամուլ», «Ազդակ», «Սուրհանդակ», «Մեղու», «Ամենուն տարեցույց», «Գեղունի» և այլ պարբերականների էջերում տպագրված քանաստեղծությունները երկու-երեք տարվա ընթացքում նրան դարձրեցին այդ տարիների ամենասիրելի հեղինակներից մեկը: «Կարմիր գիրքը» պարզապես եկավ վերջնականորեն հաստատելու այդ կարծիքը: Մամուլը միաձայնորեն բարձր գնահատեց բանաստեղծի առաջին գիրքը, և դժվար է ընդունել սևակագետ Վ. Կիրակոսյանի այն կարծիքը, թե նրա սմուտքն այնպես շոնդալնո ու հաղթական լեղավ, ինչպես «Միածանք», «Միջնադարի անուրջներ», «Տեղին սրտի» հեղինակներին» («Սովետական Հայաստան», ամսագիր, 1985 թ., № 2, էջ 12): Գրականագետը մասամբ իրավացի կլինեք, եթե խոսքը դնար հետագա տասնամյակների մասին, քանզի իսկապես դեպքեր էղան, երբ Ռուբեն Սևակի ժառանգությունը իր արժանի գնահատումը շունչազ, որի հետևանքով, թերևս, բանաստեղծն էլ իր արժանի տեղը չգտավ: Մեր գրականության պատմության մեջ Իհարկե, այս ցավալի երևույթը բացատրող որոշ օբյեկտիվ հանգամանքներ կան, որոնց կանգրադատենք Վարդ, սակայն, եթե խոսքը վերաբերում է գրական առաջին ցայլերին, այսինքն մինչև «Կարմիր գիրքը», ապա կարելի է ճիշտ հակառակը ասել: Ռուբեն Սևակի մուտքը գրական աշխարհ, իսկապես շոնդալնո էր ու հաղթական: Բավական է նշել թեկուզ այն փաստը, որ երբ Միստր Մեծարենցի կամ Վահան Տերյանի հասցեին անհեթեթ մեղադրանքներ ներկայացնող քննադատները գրոհներից իսպառ հեռու մնաց: Նրա առաջին իսկ քանաստեղծություններից ստեղծվեց միաձայն հիացական կարծիք: Օրինակ՝ բանաստեղծի գրական մուտքի ներք տարին նոր էր բուրբել, երբ Բաղթող Ջորյանը՝ ժիրայր ծածկանունով,

գրում էր. «Մե. Սևակ իր գրական սկզբնավորության մեջ իսկ, բանաստեղծի հոյակապ հայտնություն մը բերավ մեր գրականության... Դեռ նորահայտ բանաստեղծ մը Սևակ, կրնանք ըսել, որ շատ մը պատկանելի հիներու արժեքը ունի, ուշագրավ է և մեզի համար, առանց շափագանցության, բյուրորեն թանկագին գոհար մ'է»։ («Ս. րևելյան մամուլ», 1909 թ., № 27, էջ 643—44)։ Այս խոսքերը գրվում էին ընդամենը մի քանի բանաստեղծություն լույս ընծայած հեղինակի մասին, որը դեռ շատ ավելին ուներ անելու Իսկ «սպասկանելի հիներ»-ն էին Տեմիրբեպաշյանը, Չրաքյանը, Սիպիլը... Նույնպիսի բարձր և անվերապահ գնահատությունների արժանացավ և «Կարմիր գիրքը», որը լույս աեսավ բանաստեղծի մուտքից շորս տարի անց։

Ցավոք սրտի, բանաստեղծին ամբողջությամբ շնչողվեց իրականացնել ստեղծագործական մի շարք ծրագրեր, այդ թվում բանաստեղծական հաջորդ ժողովածուների հրատարակումը։ Մերուժան Պարսամյանը վկայում է («Շանթ», 1918, թիվ 2), որ Սևակը մտադիր էր լույս ընծայել «Սիրո գիրքը», «Քառուս» և «Վերջին հայերը» ժողովածուները։ Եղևրական մահը խանգարեց բանաստեղծին իրականացնելու իր հոյակապ ծրագրերը։ Գուցե որոշ շափով դեր է խաղացել նաև նրա ծայրահեղ խստապահանջությունը։ Պահպանված մի շարք ձեռագրերը դրավկայությունն են։ Որոշ բանաստեղծությունների վրա Սևակը աշխատել է մի քանի տարի և, ինչպես երևում է, դեռ չի հասել իր ուղած արդյունքին։ Նա շարունակել է կատարելու Պյան հասցնել նաև այն գործերը, որոնք մամուլում լույս տեսնելուց հետո միահամառ հիացմունքի առարկա են դարձել։ Բացի այդ, որոշ փաստեր (բանաստեղծի օրագրի պատճենները) առիթ են տալիս ենթադրելու, որ Ռուբեն Սևակը Կ. Պոլիս վերադառնալուց հետո (1914 թ.) ստեղծագործական մեծ թեկման նախօրյակին էր և հավանաբար որոշ անբավարարություն ուներ երիտասարդական տարիների մի շարք բանաստեղծությունների հանդեպ, որոնք պիտի վերոհիշյալ ժողովածուների մեջ մտնեին։ Այս ենթադրությունները, թերևս, պատասխան տան այն հարցին, թե ինչու էր առաջին ժողովածուն լույս ընծայելուց հետո նա շատապես և հինգ տարվա ընթացքում հրատարակեց երկրորդ և մյուս ժողովածուները, երբ դրանց համար գրված բանաստեղծությունների մեծ մասը հրատարակվել էր մամուլում և բարձր գնահատության արժանացել։ Բոլոր դեպքերում, կասկած չի կարող, որ թվարկված ժողովածուների տպագրվելը միևնուր լույսի տակ պիտի ներկայացնեն բանաստեղծի բացառիկ տաղանդը։ «Սիրո գիրքը», «Քառուս» և «Վերջին հայերը» գրքերը լույս չեն տեսել, սակայն հրաշքով պահպանվել են գրեթե բոլոր այն բանաստեղ-

ծությունները, որոնք պիտի ամփոփվեին դրանց մեջ։ Լեյդ բանաստեղծությունները երեք կարգի են. հեղինակի կենդանության օրոք կամ մահվանից հետո մամուլում լույս են տեսել, սակայն հեղինակի կողմից ոչ մի ժողովածուի մեջ չեն ընդգրկվել։ Երկրորդ է այս բանաստեղծությունների մեծ մասը հետագայում մտել են տարբեր ժողովածուների մեջ (Ռուբեն Սևակ. «Կարմիր գիրքը», «Սիրո գիրքը» և «Յրիվ քերթվածներ» բաժիններով, Երուսաղեմ, 1944 թ., Ռուբեն Սևակ (Ռ. Չիլինկիրյան), Բժիշկին գիրքեն փրցված էջեր և Քերթվածներ, Փարիզ, 1946, Ռուբեն Սևակ, Երկիր, Երևան, 1965, «Հայ դասականներ» մատենաշար, Ռ. Սևակ, Վ. Թեքեյան, Ռ. Որբերյան, Մ. Զարիֆյան, Երևան, 1981 թ.)։ Երկրորդ կարգին են պատկանում այն բանաստեղծությունները, որոնք մամուլում լույս են տեսել, բայց դուրս են մնացել ինչպես վերահիշյալ ժողովածուներից, այնպես էլ գրական-ընթերցողական լայն շրջանառությունից։ Երրորդ կարգը կազմում են անտիպ բանաստեղծությունները։ Ռուբեն Սևակի բանաստեղծական այս ժառանգությունը («Կարմիր գիրքը»-ից դատ) տեքստաբանների առջև դնում է լուրջ և առայժմ անլուծելի մի խնդիր. ի՞նչ սկզբունքով դասավորել այս բանաստեղծությունները։ Մ. Պարսամյանի թվարկած ժողովածուների վերնագրերից որի՞ տակ պիտի մտնի յուրաքանչյուր բանաստեղծությունը։ Մենք առայժմ չունենք հեղինակի ձեռքով կազմված որևէ ցուցակ, որով կարողանայինք այսօր առաջնորդվել և բանաստեղծությունները զետեղել ու հերթաշարել այնպես, ինչպես ծրագրել էր ինքը՝ Սևակը։ Վ. Կիրակոսյանը դատում է, որ «պահպանված ձեռագրերից, ինչպես նաև մամուլում տպագրված առանձին բանաստեղծությունների վերաբերյալ հեղինակի նշումներից հնարավոր է գեթ մոտավոր կերպով պարզել մնացած շարքերի բնույթն ու բովանդակությունը» (Վ. Ա. Կիրակոսյան. Ռուբեն Սևակ. Կյանքը և ստեղծագործությունը. Երևան, 1972 թ., էջ 9)։ Գիտական ուսումնասիրության նպատակներով, թերևս, կարելի է «գեթ մոտավոր» սկզբունքով առաջնորդվել։ Բայց երբ խոսքը բանաստեղծի պեքստերի հրատարակման մասին է, ենթադրությունների վրա հենվելու իրավունք չունենք։

Գործը գուցե որոշ շափով հեշտանա «Սիրո գիրքը»-ի պարագայում. բանգի հեղինակը, իր կենդանության օրոք, այդ ընդհանուր վերնագրի տակ մի շարք բանաստեղծություններ է հրատարակել։ Սակայն սա ևս հեռու է ճշգրտությունից և հարցի կական լուծումը չի կարող տալ։ Նախ, ստուգիվ հայտնի չէ, թե մամուլի էջերում՝ այդ ընդհանուր վերնագրով լույս տեսած բանաստեղծություններից արդյոք բոլորը կմտնեին հետագա նույնանուն ժողովածուի մեջ և ինչպիսի կարգով կդասավոր-

վնին. Բայց այդ միտքն սիրո մտախնդրով պրզված բանաստեղծութեանն՝ որ պիտի մտնեն այդ ժողովածուի մեջ, թե՛ նաև մտնչան մտախնդրովը: Ինչպես հայտնի է, Սուրեն Սևակի պոեզիայում, այս անտիմոնները՝ սեր (կյանք)—մահ, հաճախ գտնուում են հոմանիշներ, փոխում իրենց անդերը, մահվան և սիրո հրեշտակը ներկայանում է միևնույն կերպարանքով: Մա Սևակի պոեզիայի կարևոր պոետիկոներից մեկն է, և շատ հետաքրքիր է. թե այդ գաղափարը ինչպես պիտի բացահայտվեր ու դարգանար ժողովածուի մեջ:

Կարևոր է նաև հիմնադրել, որ սոցիալական և ազգային մտախնդրով գրված բանաստեղծությունները, համապատասխանաբար, պիտի հասկանալի են Քառս և Եկեղեցի հայերը ժողովածուների մեջ, սակայն միևնույն հարցերը ծագում են նաև այս պարագայում. այդ մտախնդրով գրված քոլո՛ր բանաստեղծությունները և ինչպիսի՞ն են իրազարուում:

Այս վերջին հարցը կարող է թվալ երկրորդական, սակայն բավական է ծանոթանալ «Կարմիր գիրքը»-ի բանաստեղծությունների դասակարգմանը և անմիջապես կերևա, թե Սուրեն Սևակը և ընդհանրապես այդ ժամանակի բանաստեղծները ինչպիսի կարևորություն էին տալիս ժողովածուի կառուցիկությանը, ներքին և արտաքին արխիտեկտոնիկային: Գրեթե մաթեմատիկական նշարտություն է համարում գրքի յուրաքանչյուր բաժնի, յուրաքանչյուր էջի թեմատիկ-գաղափարական ծանրաբեռնվածությունը: Բանաստեղծությունները լրացնում են կրկն-հեքիա-վերնագրերի տակ. «Ջարդի խնկրք», «Քրտնիմա և «Մարդկայություն»: Մտնչված գոսալորությունը կա նաև յուրաքանչյուր շարքի ներսում: Իսկ գրքի ամբողջական ազգայնորությունը և եզրակացությունը նույնպես է. մարդկային ցեղի սրբերությունը իր հիմքում ունի ինչպես ոգրտական անհավասարությունը, այնպես էլ ազգային ցավը: 1909 թ. կիրիլիայի ջայռի սպավորություններով ստեղծված բանաստեղծությունները աստիճանաբար լքվում են «Մարդկայություն» շարքի համաձայն-կային հոգսերի մեջ, ստանում այլ գունավորում: Եվ այս փոխոր կարևու ճարտարապետի մտածված աշխատանք լինի, այն աստիճանով, որ սրբատաշ քարերի փոխարեն, իրար վրա շարվում են բանաստեղծությունները, և էթե փորձենք մտնչի խախտել ժողովածուի այդ կարգը, անմիջապես կխախտվի կյան աննվազն այլ բնույթի կատանա սոցիալական-փիլիսոփայական այն պատկեր, որը ծնվում է բանաստեղծի ներս-կատույց աշխատանքից: Այնպես, էթե քննարկի մի դժբախտ քերական Սուրեն Սևակը հասցրած շինքի հրատարակել նաև իր միակ ժողովածուն, մենք, իհարկե, այսօր կունենայինք այդ բանաստեղծությունները, սակայն չէր լինի «Կարմիր գիրքը» արվեստ և տապալին կերպով մեր գրա-

կանություն պատմության մեջ: Ուրեմն, դժվար չէ հետևություն անել, որ այսօր էթե անենք հարյուրից ավելի բանաստեղծություններ, որոնք հեղինակը չհասցրեց ժողովածուների մեջ համարել, դա չի նշանակում, թե ումենք մտախնդր-բարոյական այն մեծ նվաճումները, որոնք պիտի անպայման անենալինք՝ վերջ հիշված գրքերը ժամանակից լույս տեսնելու դժարում: Մտնում է ավելացնել, որ գրանց մի զգալի մասն էլ՝ անտիպ-ները, ուշացումով են գալիս մտնելու: Դոգմոր մեր կատույցի մեջ Մեծ բանաստեղծների յուրաքանչյուր ժողովածուն իր կատույցով արդեն թեքնին մի առանձին բանաստեղծություն է: Մայրաքմեն ամբողջ կյանքում նրազում էր ստեղծել իր շինվածից, մտածված և ճարտարապետներեն կատույցով գիրքը և ոչ թե օգնչությունների մի համարածուց սրբան էր որ դրանք հայտնույ լինեին: Մայրաքմեն այդ պիքն անմիջապես էր Յուզանուկի գիտ, օրքի մեջ անբար պիտի խոսեր ինքն իր Քեռ, ստանց թեղիկակի ձայնի: Միմիլիտաները և նրանց հաջորդած բանաստեղծության զարուցները մեծ կարևորություն էին տալիս առանձին բանաստեղծությունների և շարքերի միջև ստեղծվող ներսերատային կապերին: Դա այն անտուալի աշխարհն էր, որը ստեղծվում էր ասանց օժիցիմուկի ձայնի, աշխիթն՝ թեղիկակի բուն ակառուցի գուրս և ներքին աշք ու սկանչ էր պիտե այդ կատույցի կերպերու համար: Այդ կատուցիկությունը ամիս է միջյամի բուր գրքերում, դա ստանձուպե և կատույցով է Զույնեցի թիքը ճանապարհի-առն Սուրեն Սևակը, որ մտիկ էր կունդում դարասիրտի հետմիմիլիտանի օգնտիրոյին, ինչպես տեսանք, միջուկատային և ներսերատային օգնտիրոյի ստեղծման սրշակի աշխատանք է կատարել իր ստալյն ժողովածուի մեջ և նույնը, համաձայնաբար, պիտի աներ Յուսուր ժողովածուները կապենիս Ռատին, այսօր մեծ բանաստեղծների համարված և շրտապարակված շուխան ստեղծարարությունները կապենուների տալ կանդում են դժվար, գրեթե անբարձի ինդիքներու եվ այսօր Ռուքմի Սևակի հրատարակված և իր լիազանած ժողովածուները կապեն, նշանակում է, ինչ-որ շափով, նրա փոխարեն ստեղծարարներ էթե մեր ուշացիր և համար պարտանունի շնորհիվ Մարտիկը կզով հարմարները ավելի բուն շինում անտիպ բանաստեղծություններ, այս պիտե է հասալ, որ որն է արխիվում, որն է մեղմահայրիկի կամ թեղիկի մատույցով մի սեղակում կհայտնարելի բանաստեղծի ձեռքով գրված այն ցուցակը, որը հիմք կզանում նրա ժողովածուների համար:

Իսկ միմեջ այդ կարծում ենք, որ Յերկա ժողովածուի համար էրդ-գրիս կիլիի բանաստեղծի՞ մեկ հասած մտանգությունը ներկայացանել հետևյալ դասակարգությանը. «Կարմիր գիրքը», բանաստեղծի կենդանու-

թյան օրոք և մահվանից հետո լույս տեսած բանաստեղծություններ՝ ըստ հրատարակման հերթականության, և անտիպներու ժամանակագրական սկզբունքով է ներկայացվելու նաև արձակը և որոշ նամակներու Այս հատորն, իհարկե, դժվար է անվանել Ռուբեն Սեակի գեղարվեստական երկերի լիակատար ժողովածու, սակայն սա ամենամտրոջլականն է մինչև այժմ եղածներից: Բավական է ասել, որ թե՛ ծավալով, թե՛ հավաքված նյութերի քանակով մոտ երկու անգամ մեծ է նրա 1955 թ. երևանյան ժողովածուից, որը մինչև այժմ հրատարակվածներից ամենածավալունն էր: Մի խոսքով, առաջին անգամն է, որ Ռուբեն Սեակի գրական ժառանգությունը ներկայացվում է այսպիսի ամբողջությամբ մեջ՝ գրեթե լիակատար: Սա առիթ է տալիս նաև հուսալու, որ մեր գրականագիտությունը մի նոր փորձ կանի ըստ արժանվույն զնահատելու բանաստեղծի ժառանգությունը: Մինչև այժմ Երևանում երեք մենագրություն է լույս տեսել նրա մասին (Գ. Հատիտյան, Ռուբեն Սեակ, Երևան, 1959 թ., էդ. Ջրբաշյան, Ռուբեն Սեակ (ստեղծագործության համառոտ ակնարկ), Երևան, 1966 թ., Վ. Ա. Կիրակոսյան, Ռուբեն Սեակ (Կյանքը և ստեղծագործությունը), Երևան, 1972 թ.): Նոր հայտնաբերված նյութերը հրաշալի հնարավորություն են ստեղծում նորովի և ըստ արժանվույն զնահատել բանաստեղծի գրական ժառանգությունը: Տեքստերը հավաքելիս աշխատել ենք որպես ելակետ ընդունել առաջին հրատարակումը, ինքնագիրը կամ հավաստի այլ աղբյուրներու: Ինչպես պարզվեց, մամուլում լույս տեսած բոլոր բանաստեղծությունները չեն, որ զետեղվել են ժողովածուների մեջ, ինչպես նաև ոչ բոլոր արձակները: Այդ կարգի շուրջ երեք տասնյակ շափածո և արձակ ստեղծագործություններ զուրս են մնացել կազմողների ուշադրությունից և չեն մտել նախորդ հինգ գրքերի մեջ, ըստ որում՝ բարձրարժեք և կարևոր բանաստեղծություններու ծավոք սրտի, ժամանակի սղություն պատճառով, հնարավոր չեղա՞վ վերջնականապես պարզել ձեռքի տակ եղած բոլոր բանաստեղծությունների ստեղծագործական պատմությունը (երբ և որտեղ է գրվել, անտիպ է, թե՛ ոչ, առաջին անգամ սրտե՞ղ է տպագրվել և այլն): Մեր աշխատանքը դժվարացավ նաև նրանով, որ Ռուբեն Սեակի ժառանգությունը ծավալով ընչա՞ծ մեծ չէ, բայց փաստորեն առաջին անգամ է փորձ արվում գիտական մշակման ենթարկելու: Ժողովածուն հավաքվել է Ծ. Ջարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի և Նիցցայում գտնվող՝ Ռուբեն Սեակի ամբողջական գործերի հավաքման հանձնաժողովի նյութերով: Օգտվելով առիթից, մասնավոր ջերմակալություն ենք հայտնում հանձնաժողովի անդամներ Հովհաննես Չիլինկիրյանին (Ռ. Սեակի եղբոր որդուն) և ճարտարապետ Տիգրան Հաճյանին՝ թանկարժեք օգնության համար: